

# «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

## ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

#### Ընկերության հեղափոխական գարգացման խնդիրները և նպատակները

**Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության հեղափոխական գարգացման խնդիրները և նպատակները հետևյալն են.**

- Ընկերությունը կշարունակի իր հիմնական գործունեությունը՝ գործընկեր ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված բնակարանային հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը:
- Ըստ կանխատեսումների, Ընկերության կողմից իր գործընկերներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2014թ.-ին կաճի մոտ 27%-ով՝ կազմելով մոտ 30 մլրդ ՀՀ դրամ: Այդ ժամանակահատվածում Ընկերությունը նախատեսում է վերաֆինանսավորել բնակչությանն ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում տրամադրված ավելի քան 1300 հիփոթեքային վարկ:
- Իր գործունեության ծավալները մեծացնելու և հիփոթեքային վարկավորումը աշխուժացնելու նպատակով Ընկերությունը միջոցներ կձեռնարկի ընդլայնելու իր գործընկերների ցանկը, ինչպես նաև կիրականացնի բնակչության իրազեկման միջոցառումներ՝ շեշտադրելով ՀՀ մարզերը:
- 2013թ. դեկտեմբերի 17-ին Ընկերությունը 13.7 մլն ԱՄՆ դոլար վարկային գծի պայմանագիր ստորագրեց Ֆրանսիական զարգացման գործակալության հետ՝ բնակարանային էներգոարդյունավետության բարձրացման և միկրովարկերի ֆինանսավորման ծրագրի իրականացման նպատակով: Ծրագրի շրջանակներում Կազմակերպությունը 2014թ. երրորդ եռամսյակից նախատեսում է սկսել բնակարանային միկրովարկավորման և էներգոարդյունավետության բարձրացման վարկավորման վերաֆինանսավորումը:
- Իր գործունեության ֆինանսավորման նպատակով Ընկերությունը կօգտագործի ինչպես ներկայում իրեն հասանելի միջոցները (սեփական միջոցներ, Ֆրանսիական

զարգացման գործակալության հետ կնքված վարկային գիծ), այնպես էլ պարտատոմսերի հերթական թողարկումից և տեղաբաշխումից ստացված միջոցները: Մասնավորապես, մինչև 2014 թվականի տարեվերջ Ընկերությունը նախատեսում է տեղաբաշխել ևս 2 միլիարդ ՀՀ դրամի պարտատոմսեր: Հաշվի առնելով տնտեսությունում տիրող իրավիճակը և հնարավոր ներդրողների կողմից ներկայացվող պահանջարկը՝ կանխատեսվող ժամանակաշրջանում Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը կլինեն մեկից մինչև երեք տարի մարման ժամկետով:

Մինևույն ժամանակ, Ընկերությունը նախատեսում է քայլեր ձեռնարկել արտաքին այլ աղբյուրներից (միջազգային զարգացման գործակալություններից) դրամական միջոցների ներգրավման ուղղությամբ՝ նպատակային ծրագրեր իրականացնելու նպատակով:

- Ինչպես և հիմնադրման օրվանից, Ընկերության ռազմավարությունն ուղղված է լինելու խելամիտ և կառավարելի ռիսկայնության և շահութաբերության համակցությանը:



NATIONAL  
MORTGAGE  
COMPANY